



**«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»  
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

**ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

**ԹԵՄԱ**

**Բառապաշարի գործուն և ոչ գործուն**

**շերտերի դիտարկումը Շիրազի պոեզիայում**

**ԱՌԱՐԿԱ**

**Հայոց լեզու**

**ՀԵՂԻՆԱԿ**

**Ազգանուշ Հովհաննիսյան**

**ՄԱՐԶ**

**Արմավիր**

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ**

**Վաղարշապատի Ռ, Պատկանյանի անվան N 9  
հիմնական դպրոց**

# Բովանդակություն

Ներածություն-----	2
Գլուխ 1-----	5
1.1 Հնաբանություններ-----	6
ա) Պատմաբաներ / տեղանուններ և անձնանուններ	
բ) Հնաբաներ / գրաբարյան կիրառություններ	
1.2 Նորաբանություններ և դիպվածային բառեր-----	10
1.3 Բարբառային և ժողովրդախոսակցական բառեր-----	14
Եզրակացություն-----	16
Օգտագործված գրականության ցանկ-----	18

## Ներածություն

Հարուստ և բազմաշերտ բառապաշարի դիտարկման, ուսումնասիրության համար նախընտրեցինք Շիրազի պոեզիան: Լեզվաոճական առանձնահատկությունների բացահայտման գործընթացը կօգնի լավ հասկանալու Շիրազի ներաշխարհը, և հակառակը՝ Շիրազի քնարերգությունը թույլ կտա լողալու հայերենի բառապաշարի անհուն ծալքերում: Հետազոտական այս աշխատանքում հետազոտական նախագիծը՝ իբրև մեթոդ, դիտարկման մեր գործընթաց ներառելը (թե՛ անհատական, թե՛ խմբային) շատ նպատակային է: Ընկալումն ու յուրացումը նույնպես արդյունավետ դարձնելու համար կարևոր նախապայման է դասախոսության մեթոդը:

Կիրառել հնարամիտ մեթոդներ, որոնցից ստացած գիտելիքի միջոցով սովորողները կտարբերակեն բառապաշարի գործուն և ոչ գործուն շերտերը, կարդացած բնագրում կգտնեն հանդիպած բառերի իմաստն ու նշանակությունը, կկարողանան դասդասել բառերը՝ համապատասխան գծապատկերի (էջ 2): Հետազոտական նախագիծ մեթոդով կկատարելագործվեն սովորողի հմտությունները: Ճիշտ մեթոդաբանությունը գովելի վերջնարդյունքի գրավականն է:

Գործնական ուղղվածության միջոցով գիտելիքը կդառնա հասանելի:

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝

- զարգացնել ինքնուրույն մտածողություն
- ձևավորել կարող և ունակ սովորող
- խթանել սովորողների ուսումնական գործունեությունը
- Կատարելագործել սովորողի մոտ արագ կողմնորոշվելու հմտություններ

Խնդիրներն են՝

- խորապես ուսումնասիրել ուսումնական նյութը
- ստեղծել գիտելիքի կայուն բազա
- դուրս բերել անձանոթ բառերը, որոնք բացատրությունների հոմանիշային շարքեր

- կազմակերպել, ձևավորել ուսուցման համար նպաստավոր և չձանձրացնող մթնոլորտ
- թույլ տալ սովորողին ինքնարտահայտվելու, սեփական մտքերն ու կարծիքը անկաշկանդ հայտնելու:

Գուցե այնտեղ էլ գրականագետը կամ լեզվաբանը կգտնի դեռևս չբացահայտված ռացիոնալ հատիկ:


Ակնարկ: Ժողովուրդը ծնում է զավակներ, ովքեր դառնում են նրա սրտի կենսական բաբախը: Շիրազը սիրվեց միանգամից: Լեզվի, ոճի ինքնատիպությամբ նա ի սկզբանե հետաքրքրություն առաջացրեց, թարմություն ու նորություն բերեց հայ քնարերգություն: Շիրակի դաշտավայրի որդին, որի արմատները սերում էին Վանից, ըստ Չոպանյանի՝ «Երևանի և ամբողջ աշխարհի հայ բանաստեղծներուն մեջ ինքնուրույն տեղ մը գրավելու արժանի ներշնչյալ, հմայիչ քնարերգակ մըն է»:

Նրան հաջողվեց ոչ միայն հավատարիմ մնալ հայ դասական բանաստեղծության բազմադարյան ավանդույթներին, այլև ստեղծել իրեն բնորոշ քնարերգական ուղղություն՝ աշխարհընկալման իր անմիջականությամբ ու կեցվածքով:

Շիրազը, իրոք, նորագույն հայ քնարերգության նորարարներից մեկը եղավ, բովանդակության ու ձևի ուրույն նորարարը: Նա գտավ նաև հայ պոեզիայում նոր կերպ: Կարծում ենք՝ ստեղծագործության հսկայական նշանակությամբ և ճանաչողականությամբ, ընդհանրացումների տիեզերականությամբ և լեզվական անսպասելի լուծումներով Հովհաննես Շիրազը բանաստեղծական զարգացման համաաշխարհային ուղեծրում իր ուրույն տեղն ունի՝ շփման եզրեր ունենալով հին ու նոր բոլոր խոշորագույն քնարերգուների հետ:

Իր շուրջ կեսդարյա ստեղծագործական կյանքում Շիրազը թողել է հարուստ գրական ժառանգությ ուն:

Այս հետազոտական աշխատանքում դիտարկում ենք գրողի պոեմներում, «Քնար Հայաստանի» ժողովածուում բառապաշարի գործուն և ոչ գործուն շերտերը, որոնք ստորև ներկայացնում ենք գծապատկերի տեսքով.



# Գլուխ 1. Բառապաշարի գործուն և ոչ գործուն շերտերի դիտարկումը Շիրազի պոեզիայում

Լեզվական որևէ իրողության արդյունավետ ուսուցման համար կարևոր նախապայման է բնագրային հենք ընտրելը: Դրա միջոցով է իրականացվում ուսումնական մտային աշխատանքի այնպիսի կարևոր խնդիր, ինչպիսին է գեղարվեստական խոսքի, բառի արտաքուստ չարտահայտված, բայց ներքին շերտերում պահված ասելիքի բացահայտումը, ընկալումը և մեկնաբանումը:

Բառը լեզվի հիմնական նյութական բաղադրիչն է և հաղորդակցման ամենակարևոր լեզվական միավորը: Խոսքում հանդես է գալիս իր երկու հիմնական գործառույթներով՝ անվանողական դերով և հուզաարտահայտչական երանգավորմամբ:<sup>1</sup>

Ըստ գոյատևության հայ լեզվաբանությունը բառերը բաժանում է երկու խմբի՝ գործուն և ոչ գործուն:

Գործուն են այն բառերը, որոնք գոյություն ունեն վաղ ժամանակներից, ստեղծվել են հետագայում և հարատևում են մինչ օրս:

Ոչ գործուն են այն բառերը, որոնք պատմական մի ժամանակահատվածում գործածվել են, սակայն ինչ-ինչ պատճառներով դարձել են ոչ գործածական: Այդպիսի բառերի մի մասը գործածվել է գրաբարում, մի մասն էլ՝ ավելի ուշ ժամանակներում, նույնիսկ մեր օրերում, բայց այժմ այդ բառերը տրվել են մոռացության: Հազարավոր այդպիսի բառեր, սակայն, պահպանվել են գրականության էջերում, որտեղից էլ, իհարկե, ոչ լրիվ մուտք են գործել մեր բառարանները:

Բառապաշարի ոչ գործուն շերտին են պատկանում հնաբանությունները, նորաբանությունները, տերմինները, ժարգոնային-ծածկալեզվային բառերը և գոեհկաբանությունները, բարբառային ու դիպվածային բառերը:<sup>2</sup>

Շիրազը իրենով է արել ինչպես գործուն, այնպես էլ ոչ գործուն բառապաշարը: Բառերն այնպես են խաղում, վետովետում նրա գրչի տակ, որ համագործածական շատ

<sup>1</sup> Տե՛ս Լևոն Եզեկյան, Հայոց լեզվի ոճագիտություն, Եր., 2004, էջ 116:

<sup>2</sup> Տ՛ես, Մ.Պ.Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, 1 Եր., 1990, էջ 149

պարզ ու հասարակ բառերով, բայց հասուն փիլիսոփայությամբ Շիրազը կարողանում է ստեղծել գողտրիկ էջեր, որոնք անմահ են ու մնայուն:

*Այնքան գրքեր եմ կարդացել, իմ սեր,*

*Բայց հոգուդ գիրքը մութ մնաց դարձյալ,*

*Աստղերի լեզուն հասկացա ես էլ,*

*Բայց հոգուդ գիրքը, չեմ կարող կարդալ. «Քնար Հայաստանի», հ.2, էջ 44)* Շիրազի

կախարդական գրիչը հասարակ ու պարզ բառերը դարձրել է քնարերգության գեղեցիկ մի նմուշ:

*Թե իմ երգերը, իբրև գոհարներ,*

*Ղուր գան իմաստուն քառասուն մարդու,*

*Անունս կապրի քառասուն դարեր : («Ք.Հ.», հ. 2, էջ 58)*

Ինչպես տեսնում ենք, բառերը պարզ են ու հասկանալի, իսկ միտքը խորն է ու իմաստուն: Մեջբերման բոլոր բառերը համագործածական բառապաշարից են, սակայն հեղինակը կերտում է տողեր, որոնք վկայում են նրա տաղանդի մասին:

Շիրազի ժողովածուներում ոչ գործուն բառաշերտից հանդիպում ենք բարբառային և ժողովրդախոսակցական բառերի, նորաբանությունների, դիպվածային բառերի, շատ են հանդիպող տեղանունները, իսկ հնաբանություններն ուղղակի հրաշքներ են գործում:

Հատկապես գրավիչ են բանաստեղծի հնաբանությունները:

**1.1 Հնաբանությունները** (հնաբառեր և պատմաբառեր) առօրյա գործածությունից դուրս մղված, հնացած բառերն ու ձևերն են, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են գործածվել արդի լեզվում:<sup>3</sup>

Հնաբանությունները յուրաքանչյուր լեզվի բառապաշարի ամենասակավ ու սահմանափակ գործածություն ունեցող բառերն են և պատկանում են լեզվի ոչ կենսունակ, ոչ գործուն բառաշերտին:

Հնաբանությունները բաժանվում են երկու խմբի՝ պատմաբառեր և հնաբառեր:

**ա)** Պատմաբառերը ժողովածուում հաճախադեպ են: Սրանք լեզվի զարգացման որոշակի փուլում անվանել են տվյալ ժամանակաշրջանին բնորոշ առարկաներ, երևույթներ, տարբեր հասկացություններ, որոնք ժամանակի ընթացքում վերացել են, երբ

<sup>3</sup> Ա.Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1993, էջ 205:

այդ իրողությունները տարբեր պատճառներով դուրս են եկել գործածությունից: Գործածությունից դուրս են մնացել նաև դրանք անվանող բառերն ու արտահայտությունները:<sup>4</sup>

Շիրազը պատմական պատկեր և հնադարյան կոլորիտ ստեղծելու նպատակով դիմել է **պատմաբանի** կիրառությանը:

*Մեարոպ Մաշտոց, հայոց աստվածն ու բազինն էս դու հայոց,*

*Մմեն հայ մոր ստինքի մեջ՝ շրթունքին էս դու հայոց...* (Ք.1., 1.2 էջ 14)

Ժամանակակից հայերենի բացատրական բառարանում բազին նշված է պատմաբան, գրականը՝ զոհասեղան:

Շինականը Շիրակի, որ խալիֆին մահս տար...

Ժամանակակից հայերենի բացատրական բառարանում խալիֆ նշված է պատմաբան, գրականը՝ արաբների ամիրապետի տիտղոս:

Պատմաբաները լեզվի զարգացման տվյալ փուլում չունեն իրենց համարժեք, հոմանիշ ձևերը:

Պատմաբաների շարքին են դասվում նաև որոշ **անձնանուններ ու տեղանուններ**:

Բանաստեղծի հատկապես մի քանի գործերում շատ են հիշատակվում տեղանունները Բզնունյաց (ծով), Սյունիք, Մասուն, Մարմաշեն, Շիրակ, Օշական, Ավարայր, Մշո դաշտ, Արածանի, Արագ և այլն: ( «Ք.Հ», հ. 2, էջ 353)

Հանդիպում են նաև բազմաթիվ անձնանուններ՝ Ծովինար, Խանդուր խանում, Անահիտ, Այծեմնիկ, Փոքր Մհեր , Իշխան Սլաք, Մուշեղ և այլն:

Ի՞նչ է նշանակում պատմական անունների և տեղանունների այս տարափր: Հիրավի, փնչպես հավաստում է գրականագետ Դավիթ Գասպարյանը, Շիրազը մի յուրահատուկ բավականություն է ստանում հայոց պատմական անունների թվարկմամբ, կարծես այդպես միաբանում է հայրենիքի տարածքները:

Տեղանունների բազմաքանակության մեջ իր փառահեղ գահույթին է Մասիսը:

Մասիսամեծար բանաստեղծը միշտ երգում է, գովերգում է, կարոտում է նրան: Մասիսի երգիչ. Մասիսի ամենամիլիրյալ երգիչն է Շիրազը: Նա փառաբանում է՝ հիշեցնելով՝ «Մասիսը՝ օրոցքը մարդկային ցեղի »: (Երկեր, հ.2, էջ 60)

*Եվ այսպես մանուկ մարդը դրախտից...*

<sup>4</sup> Լ.Եզեկյան, Հայոց լեզու, Եր., 2005, էջ 157:



*Ցած իջավ ինչպէս Նոյն Արարատից: (հ. 2, էջ 61)*

Կամ՝

*Ազգ իմ, անսա և օղ արա պատգամներս ականջիդ,*

*Սև ամպի տակ մի թող Մասիսն ու Վանա ծովն իմ վճիտ:*

Մասիսը մարդկության փրկության հանգրվանն է, Շիրազի համար Մասիսն աստվածային ոլորտներից է, Մասիսն անբասիր է, սուրբ մասունք է Մասիսը, իսկ ամենաողբերգականը՝ իրենն ու հայինը չէ:

Շիրազի ամենանվիրական բաղձանքը Մասիսը «սև ամպի տակից»՝ թուրքերից, ազատագրելն է:

Շիրազի լեզուն Մասիսի մասին խոսելիս միշտ դառնում է բռնկուն: Երևույթը, առարկան կարծես թե նույնն են, բայց պատկերներն ամեն անգամ ներկայանում են նորովի, նոր ոճով, արտահայտչամիջոցների նոր ընտրությամբ:

Հասկանալով նրան՝ հասկանում ենք՝ Մասիս երգելով՝ Շիրազը երբեք չի ձանձրանում ու չի ձանձրացնում:

### **բ) Հնաբառեր**

Ուսումնասիրելով Շիրազի հիշյալ ժողովածուները՝ նկատեցինք, որ բանաստեղծը տուրք է տալիս գրաբարին:

Իհարկե, հնարավոր չէ խոսել «Բիբլիականների» լեզվաոճական առանձնահատկություններից՝ չանդրադառնալով գրաբարյան բառապաշարին, որն այնքան ճիշտ ու գրագետ է կիրարկված հեղինակի կողմից:

Եթե բիբլիական է, ուրեմն տեղին է գրաբարը, որը հնաբույր ու աստվածային կոլորիտ է հաղորդում պատկերներին:

*Իսկ ծաղիկներից՝ շունչն անմահության*

*Որպես նոր գինի, իցիվ դու գտնես,*

*Ըմպես, որ չիջնես ձորը ծերության.. (Երկեր, հ. 2, էջ 12)*

Կամ՝

*Ու մինչև այսօր չգիտես՝ գտա՞վ, թե դեռ չի գտել՝*

*Զի մարդը ծաղկի սուրբ քնքշությանը մնաց անընտել: ( էջ 25)*

Շիրազի գրաբարյան բառերի կիրառությունները խոսքիմասային բազմազանություն ունեն: Պոեմներում շատ են գոյականի տարբեր հոլովաձևերով կիրառությունները, դերանունները, բայի դիմավոր և անդեմ ձևերը, վերաբերականներն ու շաղկապները:

Գոյականով արտահայտված ձևեր՝ կենացհովիտ, նյ ութոցմիացում, հրաշքը շարմանց, յոթանասունհովտաց, գեղջկանց, հունաց, լյառ, բուսոց արքա, որդոց, աղոթող լերանց, իրանացոց և այլն:

Բայերով՝ եղյալ, արձանացյալ, խոռվյալ, եղյալ, ավարտվեցավ և այլն: Այլ խոսքի մասերով՝ նոքա, ինձմով, աստ, նոցա, զի, իցիվ և այլն:

*Ու թե մեռնում է՝ մեռնում է միայն*

*Ինչպես ցորյանը ի սեր նոր ծագման. (Էջ 56)*

Կյանքի հարատևության, գիտակցված մահվան և անձնագոհության նկարագրությունը ավելի խոսուն և պատկերավոր է դարձել ընդամենը գրաբարաձև դրված ցորյան բառով, նաև ի-սեր նախդրավոր բառակապակցության շնորհիվ:

Ազդեցիկ, են նաև հարակատար դերբայի նշանակությամբ կիրառված գրաբարյան բայաձևերը, որոնցով անչափ հարուստ է պոեմների ժողովածուն:

Շիրազի ստեղծագործություններում հանդիպում է Հոդը բառը մեծատառով: Սա նույնպես գրաբարյան շեշտադրում է , և իմաստով նկատի ունի հայոց երկիրը:

Գրաբարյան կիրառությունների յայնորեն գործածությանը նպասակել Աստվածաշնչի խոր իմացությունը: Վառ պատկերներով հարուստ և խոսքին զգացմունքայնություն հաղորդող ոճը Շիրազը սերում է Աստվածաշնչից՝ արևելյան գրականության դասական ստեղծագործությունից: Նա, անշուշտ, կրում է Աստվածաշնչի միջնորդավորված ազդեցությունը հենց ի սկզբանե, երբ վերնագրում է պոեմը «Բիբլիական», պոեմների շարքը՝ «Բիբլիականներ»:

«Աստծո գլուխգործոցը» պոեմի երկրորդ գլխում կարդում ենք.

*Եվ հազար աչքով նայեց կերտվածքին,*

*Որ վեհ ու բարի նստել էր, ինչպես*

*Նոր արձանացյալ հսկա մի Մովսես: (Երկեր, հ. 2 էջ 45)*

Հեղինակն այնքան լավ գիտի Աստվածաշունչը, որ անմիջապես համեմատական հոյակապ եզրեր է գտնում Աստծո կերտվածքի և նախակարապետ Մովսեսի հանդարտ վեհության միջև:

Շիրազը իր «Բիբլիականի երկրորդ արարչականը» պոեմում, հանգավորելով եթովբե և Հովբե բառերը, անում է աստվածաշնչյան բացահայտում.

*Այս մարդացեղն է ճամփեց արևելքն իր հողագնդի,*

*Աշխարհ բերելով հրաբխի ու նուրբ մարդացեղն եթովբե,*

*Այնտեղ, ուր ջունգլին ողբում էր, ինչպես վիրավոր մի Հովբե: (Երկեր, Ճ. 2 էջ 26)*

Քաջատեղյակ Աստվածաշնչին՝ Շիրազը ջունգլիների ողբը համեմատում է բորոտությամբ տառապող, վերքերով պատված Հովբին, որն անցնում է փորձություններով՝ կրելով Աստծո պատիժը, զրկվելով ընտանիքից և ունեցվածքից: Հաջորդ բանաստղերում շարունակվում է ներքին իմաստը առանց հիշատակելու Հովբի հանդեպ Աստծո հետագա բարեգթությունը:

*Դու էլ բազմացիր՝ հավիտյան անեղծ*

*Քանի այս օշոշ ծաղիկն էլ բացվի՝*

*Թող քո սուրբ լեզվով քո հողը լցվի: (էջ 26)*

«Բիբլիականի երկրորդ արարչականը» պոեմում տրամաբանական մի ողջ մեջբերում կա գրաբարով: Այս անգամ մեջբերումը «Նոր Գտակարան»-ից է, բայց մոտավոր ճշտությամբ.

«Ձի պիտ մարդանա ոչ միայն հացիվ,

Այլ բանիվ սրտի, այլ մտքի բանիվ (էջ 22)

Ենթադրում ենք, որ «Նոր Կաակարան»-ի (Ղուկ. Դ.4) այս միտքն է. «Ոչ հացի միայն կեցցե մարդ, այլ ամենայն բանիւ Աստուծոյ»:

Ճշգրիտ տարբերակը արևելահայերենով այսպես է. «Միայն հացով չէ, որ կապրի մարդ, այլ Աստծու ամեն խոսքով (Ղուկ. 1.4):

Ակնհայտ է, Շիրազը բառերին թելադրում է իր փիլիսոփայություն:

**1.2 Նորաբանություններն ու դիպվածային բառերը** Շիրազի լեզվական բառապաշարում ասես օրգանական համալրում են: Նորաբանությունները այն բառերն ու դարձվածքներն են, որոնք ստեղծվում, առաջ են գալիս լեզվի շարունակական զարգացման ընթացքում արտահայտելով նոր երևույթներ, իրողություններ ու հասկացություններ:

Նորաբանությունները լինում են լեզվական և հեղինակային կամ անհատական:  
Նկատի առնելով Շիրազի անհատականությունը՝ արդեն հասկանալի է, որ նրա ստեղծագործություններին նոր երանգավորում են հաղորդում նորակազմությունները:

*Ծաղկանց անուշ բույրն ու քնքուշ լեզուն մրցելով իրար՝  
Մեղրածով էին դարձնում Մասիսն ու հովիտն իր ծով,  
Լոկ սաստանան էր ականջը գոցում/իր չար նախանձով,  
Որ կշխեր այս մեղրահամերգն իր ճամփամիջին: (էջ 19)*

Շիրազն անհատական մեկնություն է տալիս մեղրածով բառին: Իր պատկերային առումով չի զիջում նորակազմ մեղրահամերգ՝ը, երբ նկարագրում է ծաղիկների զրույցը: Բանաստեղծն ամեն հնարանքի մեջ ապացուցել է իր տաղանդը, լեզվական փոքր միավորին՝ բառին անգամ տիրելու, իրենք դարձնելու բնածին շնորհը:

*Կուչ եկավ ահից մանուշակն՝ աստծո լեզուն բերանում,  
Թաքնվեց թփում, ինչպես դեռա կույսն իր հոր վրանում  
Լացեց քնքշաճիչ, բայց խիղճը կորցրեց արարողն ասես  
Եվ իսկույն պոկեց հեզ մանուշակի քնքշանուշ լեզուն: (էջ 23)*

Շիրազի նորաբանությունները, որոնք հիմնականում կազմվել են բարդության միջոցով, յուրօրինակ համ ու հոտ են հաղորդում բանաստեղծական նյութին: Հանդիպում ենք՝ լեզվաբույր, նեկտարալեզու, վայրենաթոթով, աստվածագուն, հողմախելահեղ, փրփրաբարուր, այբբենաթուր, նորաստեղծ բարդությունների:

Բառակազմական կաղապարի համանմանությամբ Շիրազն ստեղծում է նոր բառեր. Կակաչաբույր (հարսնաբույր), մեխակալեզու (բազմալեզու), լուսավայրկյան (երկվայրկյան), վշտաշիվ (նորաշիվ):

Ո՛վ իմ վշտաշիվ (այս բառով նկատի ունի հայ մարդուն):

Շիրազի ստեղծագործություններից բառաքաղված մի շարք նորաբանություններ տեղ են գտել էդ. Ադայանի << Արդի հայերենի բացատրական բառարան>>-ում, որի մասին խոսվում է բառարանի <<Առաջաբան>>-ում:

Նորակազմությունների համակարգում իրենց ոճական երանգավորումով ու կիրառման հաճախականությամբ որոշակիորեն տարբերակվում են դիպվածային (օկագիռնալ) բառերը:

Ի տարբերություն սովորական բառերի՝ սրանք ընդհանուր հասարակական իրողություններ չեն, այլ անհատական՝ հեղինակային:

Դրանք հաճախ ստեղծվում են լեզվական նմանողության սկզբունքով:

*Ու մտքում մի պահ ծաւի տվեց չարը սատանակաղկանձ: (Երկեր, հ. 2 էջ 21)*

Իր նորաստեղծ բառի նմանությամբ, նույն կաղապարով Շիրազը ստեղծում է մեկ ուրիշը՝ ծնված երևակայությունից ու պահի անհրաժեշտությունից:

*Մի անշեջ ու հեզ*

*Կապույտ բոցի պես*

*Դրեց բերանը վայրենակաղկանձ ուրիշ մի մարդու,*

*Ինչպես մայրն է միշտ դնում ստինքը բերանը որդու: (Երկեր, հ. 2 էջ 23)*

Նարեկացիական շնչով, նրա ոգուն հարազատ՝ Շիրազն ստեղծում է փոթորկված հոգու փոթորկուն պատկերը, որտեղ նրա հեղինակային-անհատական բառերը թափ ու գորություն են հաղորդում խոսքին:

*Թե կաս... բայց դու կաս, դու կաս ահարկո՛ւ, .*

*Կտրե իմ սրտից լեզուս մեղսալեռ,*

*Դու բնակիչն ես անմահ իմ հոգու: (Երկեր, հ. 2 էջ 86)*

Դիպվածային բառերը ծնվում են և հորդում, երբ բանաստեղծի հուզապրումը հասնում է ծայրահեղ շիկացման.

*Ներիր մանուկիս այս–բազմաչարչար,*

*Մեղսամակարդ եմ մարդս անկատար: (Երկեր, հ. 2 էջ 86)*

Կամ՝

*Կեղծիքի դեմ, խարդավանքի որումի դեմ չարի,*

*Միշտ բարության երկունքի մեջ՝ սրտարգանդ ես բարի: (Երկեր, հ. 2 էջ 104)*

Շիրազի պատկերային մտածողությունը մերում է նոր բառ.

Մահվան մի փուշն էլ սիրտը չի մտնի,

էլ ինչ, ինչ քաղցկեղ , ինչ մահամերան:

Միայն իրեն բնորոշ բանաստեղծական նոր բառով, խոսքի արտահայտչականությունը պայմանավորող լեզվական տարբեր միջոցներով բանաստեղծը գործում է պատկերներով լեցուն մի գորգ, որը պատկերավոր մտածողության արգասիք է , ինչպես՝

*Ու ապշանքն աչքին՝ աղոթեց անհուն,  
Քնած աղոթեց, աղոթեց անքուն (հակադր.)  
Ինչքան աղոթեց, այնքան աղոտեց (համանուն.)  
Իր նորականթեղ միտքն ու խարխափեց  
Առեղծվածի դեմ հավերժ թվացող:*

Շիրազը բառապաշարի շերտերից պեղում է բառեր, անհրաժեշտության դեպքում ստեղծում իր անհատականը:

Նա հատուկ գոյականներից կազմում է կրավորակերպ չեզոք բայեր (մասիսվել, հունաստանվել, հիմալայվել, մերուժանվել, վասակվել), հանդիպում են նաև հասարակ գոյականներից կազմված ձևեր՝ շուշանվել, սվինվել, արաբվել, հարեմվել, օազիսվել և այլն:

Բառաստեղծման վարպետը փայլում է իր երևակայությամբ, քերականական և իրական ժամանակները իրեն ենթարկում.

*Մահը մահացուր.  
Մեզ հավերժացար՝  
Ոչթե անունով ինչ-որ ընդունայն,  
Այլ հավերժ խոսքով իմ սրտի արյան,  
Ինձ պարմանացուր, ինչպես տաղերս (էջ 121-122)*

Ճիշտ է, Շիրազի ստեղծած քերականական ժամանակը ժամանակային առանցքի վրա կայուն տեղ չունի, բայց հետաքրքիր է ժամանակի ընկալման իր ինքնատիպությամբ: Ուշագրավ է նաև Շիրազի նախասիրությանն արժանացած մարդանալ բայը:

Շիրազին չեն բավարարում հայերենի հազարավոր բառերը, և նա վարպետորեն կազմում է այնպիսի ձևեր, որոց շնորհիվ էլ ապահովում է իր խոսքի գեղարվեստական մեծ ուժը:

### 1.3 Բարբառային և ժողովրդախոսակցական բառեր

Հիշելով Չոպանյանի բառերը, որ Շիրազը «երեկվա խուժանային որբ տղեկ մը եղած է», հասկանալի է՝ նրա պոեզիան չէր կարող չսնվել ժողովրդական ակունքներից:

Նրա երգը տաքուկ և հոգեհարազատ է դառնում բարբառային ու ժողովրդախոսակցական բառերի շնորհիվ նունպես: Մեծանուն բանաստեղծն իր երգերին ժողովրդականություն հաղորդելու նպատակով, ինչպես նաև անմիջականություն ստեղծելու համար դիմել է բարբառային բառերի օգնությանը: Ժողովրդական մտածողությունը, բառն ու բանը հմտությամբ կիրառելով՝ Շիրազը բանաստեղծական տարբերակի ճիշտ ընտրություն է կատարել:

*Դարդս տվի հովերին՝ հովերը չառան,*

*Դարդս տվի ծովերին՝ ծովերը չառան. (Ք.1. էջ 57)*

Այստեղ վիշտ գրական բառի փոխարեն Շիրազն օգտագործում է դարդը. այս տողերում հաստատ վիշտ-ը անելիք չուներ: Առնել բայը այստեղ նունպես ժողովրդական նրբերանգ է ստանում:

Մի այլ տեղ հանդիպում ենք.

*Տաքացավ հույսը՝ թխսամեր դառավ: (Երկեր h.2 էջ 125)*

Ժողովրդականփորձառության զարմանալի իմացությունն (թուխս դառնալիս հավի ջերմաստիճանը բարձրանում է) օգնում է ժողովրդախոսակցական բառերով կատարելության հասնող գեղարվեստական պատկեր ստեղծելուն:

Երբ խոսում է ժողովրդական բժշկության անմահներից՝ «Հայոց Մխիթարն, Ամիր Դովլաթը», հարկ է համարում լրիմանիր ժողովրդախոսակցական բառի գործածությունը:

*Մի թե լրիմանիք ճոխ արևելքի*

*Չգիտեն ակունքն հավերժ գոյանքի: (Երկեր h.2 էջ 125)*

«Վանեցու ողբը» գործում փախեփախ-ը ոչ մի ուրիշ գրական բառով չես փոխարինի, բառն իր տեղում է ու դիպուկ, իրավիճակի համար ճիշտ ընտրված.

Փախեփախի այն գիշեր հայրս փորեց գլխահակ

Գերեզմանի պես մի հոր մեր հին Վանա կաղնու տակ (Ք.2. էջ 55)

Շիրազը բանաստեղծական խոսքի ամենաճշգրիտ ու անսխալական ներկայացուցիչներից մեկն է: Նա հարյուրավոր բառերից ընտրում է այն բառը (ինչ

բառաշերտի էլ պատկանի), որն ավելի ճիշտ ու դիպուկ է ներկայացնում ոչ միայն խոսքի իմաստը, այլ նաև տրամադրությունը:

Այսպիսով, լեզվական բառապաշարը իր գործուն և ոչ գործուն շերտերի ողջ զինանոցով Շիրազը փորձում է ծառայեցնել ի նպաստ գեղարվեստական խոսքի պատկերավորության և պատկերավոր մտածողությանը, որը նրան աներկբա հաջողվում է :



## Եզրակացություն

Մեր դիտարկումից բխում է, և ունենք իբրև վերջնարդյունք տվյալ հետազոտական աշխատանքը հետևյալ եզրահանգմամբ. **լեզվական որևէ իրողության արդյունավետ ուսուցման համար կարևոր նախապայման է բնագրային հենք ընտրելը:**

Դրա միջոցով է իրականացվում ուսումնական մտային աշխատանքի այնպիսի կարևոր խնդիր, ինչպիսին է գեղարվեստական խոսքի, բառի արտաքուստ չարտահայտված, բայց ներքին շերտերում պահված ասելիքի բացահայտումը, ընկալումը և մեկնաբանումը:

Այսպես ապահովում ենք նաև միջառարկայական անքակտելի կապը՝ լեզու-գրականություն, գրականություն-լեզու

Ուսումնասիրելով Շիրազի քնարերգությունը (մասնավորապես երկեր, հատոր 2-րդ, Պոեմներ, «Քնար Հայաստանի»)՝ նկատել ենք, որ բանաստեղծը հավատարիմ է իր բանաստեղծական հավատամքին: Շիրազը հուզական թափով ներկայացնում է Աստծու արարչագործությունը, նրա գլուխգործոցը՝ մարդուն, փառաբանում է մորը, անգուսպ կարոտով հյուսում Մասիսի վերադարձի երգեր:

Աստված – մարդ – մայր – Մասիս. Շիրազը յուրաքանչյուրի համար հայոց լեզվի համալիր բառապաշարից գեղարվեստական պատկերների ուրույն լուծումներ ունի:

Աստծու արարչագործության աննախադեպ թափը, մարդու՝ տառապանքներով իմաստացած կյանքի ուղին, մայրամեծար բանաստեղծի որդիական սերը, Մասիսին ձոնված անգուսպ կարոտը Շիրազը ներկայացրել է՝ բառապաշարի շերտերից պեղելով բառեր, անհրաժեշտ դեպքում ստեղծելով իր անհատականը: Բառաստեղծ վարպետը փայլում է երևակայությամբ. ստեղծում է բառեր, որոնք հասկանալի են իմաստով, անհասկանալի՝ քերականորեն:

1. Շիրազը ստեղծում է հեղինակային պատկերավորման ինքնատիպ միջոցներ. հատուկ գոյականներից կազմում է կրավորակերպ չեզոք բայեր (մասիսվել, հիմալայվել, մերուժանվել, հունաստանվել), հանդիպում են նաև հասարակ գոյականներից կազմվող ձևեր:

Սրանք այնքան համահունչ են իմաստին, որ հասկանալի են, ընկալելի, միայն աչքի է զարնում քերականորեն անձանոթ ձևը:

Հեղինակն իր շատ գործերում ընթերցողին ժամանակի շնչին հաղորդակից դարձնելու և կոլորիտ ստեղծելու նպատակով օգտվել է գրաբարից, ոչ գործուն բառապաշարի շերտերի հասկություններից:

Շիրազը պոզեզիայի համ ու հոտ տալու, ժողովրդականություն հաղորդելու նպատակով կիրառում է բարբառային, ժողովրդախոսակցական բառեր:

Շիրազը խոր փիլիսոփա է. զարմացնում նրա վարպետությունը ու մտքի թռիչքը: Վերցնելով ժողովրդինը (առած, ասացվածք) գեղարվեստորեն վերադարձնում է նրան.

Ջուկը գլխից է հոտում, ոչ թե մարմնից առաթուր:

Շիրազի պոեզիայում կարևոր տեղ են զբաղեցնում դիպվածային բառերը:

Շիրազի քնարերգությունը մի շտեմարան է, որ օգնում է դիտարկելու լեզվի, ոճի առանձնահատկությունները, իսկ լեզվավոճական իրողություններն ուսումնասիրելիս շահում է, իհարկե, քնարերգությունը՝ ընթերցողի առջև բացահայտելով նոր ու գաղտնաձածուկ շերտեր:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ա. Մենագրություններ, գիտական հրապարակումներ

1. Գ. Ջահուկյան և այլք, Հայոց լեզու, հ. 1, Երևան, ԵՊՀ. հրատ., 1980, էջ 528:
2. Լ. Եզեկյան, Հայոց լեզու, Երևան, ԵՊՀ, հրատ., 2005, էջ 398:

Բ. Բառարաններ

1. Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան» հրատ., 1976, հ. 1, էջ 950, հ. 2, էջ 690:
2. Փ. Մեյթիխանյան, «Նոր բառերի բացատրական բառարան» Երևան, «Փյունիկ» հրատ, 1996, էջ 208:

Գ.Գեղարվեստական գրականություն

Հովհ.Շիրազ, Երկեր, հ.2,Պոեմներ, «Սով. գրող» հրատ., Երևան 1982:

Հովհ.Շիրազ, Քնար Հայաստանի, Գիրք երկրորդ, Հայպետհրատ, Երևան 1964

Աստվածաշունչ Մատեան Հին և Նոր կտակարանների, սբ էջմիածին, 2001:

Աստվածաշունչ Մատեան Հին և Նոր կտակարանաց, Երևան, 1997: